Ջորջ Ռիքֆորդի պատմությունը

1969թ. Ջորջ Ռիքֆորդը՝ մի չափահաս երիտասարդ, որն ապրում էր Լեստերում (Անգլիա), հանդիպեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու միսիոներներին: Ջորջը սկզբում մերժեց նրանց ուղերձը, բայց, ի վերջո, սկսեց հանդիպել միսիոներներին: Երեք ամիսների եռանդուն դասերից հետո Ջորջը մի առավոտ արթնացավ համոզմունքով, որ Եկեղեցին ճշմարիտ է:

Ջորջն անհամբեր էր՝ իր նոր վկայությամբ կիսվելու երեցների հետ: Բայց մինչ նա կկարողանար անել այդ, երեցները տեղեկացրին, որ որպես Եկեղեցու անդամ նա չի կարողանալու քահանայություն ստանալ իր խառը ռասայական ժառանգության պատճառով, որում աֆրիկական ծագման սևամորթ նախնիներ կային:

Մի օր Ջորջը իր մոտ ընկերոջ հետ խոսում էր միսիոներների հետ ունեցած իր փորձառության մասին և սկսեց իր ընկերոջն ուսուցանել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Նա հիշում է. «Երբ ես պատմում էի այդ պատմությունը, ես ավելի էի ոգևորվում, ապա ինչ-որ բան սկսվեց ու ես պարզապես ճառագայթում էի»:

Այդ փորձառությունը վերահաստատեց Ջորջի վկայությունը, բայց քահանայության սահմանափակման մասին նրա մտահոգությունները մնում էին: Երբ նա աղոթեց լրացուցիչ հասկացողություն ստանալու համար, ստացավ հետևյալ ուղերձը. «Դու պարտավոր չես հասկանալ ամեն ինչ իմ ավետարանի մասին, նախքան դու պարտավորություններով կկապվես դրա հետ: Ինչո՞ւ դու ցույց չես տալիս քո հավատքը՝ ընդունելով այն, ինչ լսել ես, իսկ մնացած ամեն բան իմ ձեռքը հանձնիր»:

Ուղերձը հանգստություն բերեց Ջորջին, և նա աղոթքով պատասխանեց. «Այո, Տե՛ր, ես կընդունեմ: Ես կընդունեմ այն հավատքով: Ի դեպ, շնորհակալություն»: Երկու ամիս անց Ջորջը մկրտվեց և դարձավ Եկեղեցու հավատարիմ անդամ:

1975 թվականին՝ քահանայության վերաբերյալ հայտնությունից երեք տարի առաջ, Ջորջն արտահայտվեց Աստծուն պարզապես հավատալու մասին՝ գրելով, որ սահմանափակումն ընդունել է «հավատքով՝ առանց վերապահման»: Նա ավելացրել էր. «Ես պարզապես երախտապարտ եմ, որ Տիրոջ քահանայությունը կրկին երկրի վրա է՝ իր բոլոր ուղեկցող օրհնություններով, իշխանությամբ և պարտականություններով: Ինձ համար քիչ նշանակություն ունի, թե ով ունի այն, և ով չունի, այլ ավելի կարևոր է, թե ինչպես է այն օգտագործվում»:

1978 թվականին Ջորջն իմացավ, որ քահանայությունը տարածվում է բոլոր արժանավոր տղամարդկանց վրա (տես Պաշտոնական Հայտարարություն 2-ը):

«Երբ Ջորջը տուն վերադարձավ, նա և Ջունը [նրա կինը] ողջ գիշեր խոսում էին այն մասին, թե այդ նորությունն ինչ նշանակություն էր ունենալու իրենց ընտանիքի համար: Դա հոյակապ փոփոխություն էր: Հաջորդ առավոտ Ջորջ Ռիքֆորդը կարգվեց որպես Ահարոնյան Քահանայության քահանա: Երկու ամիս անց նա կարգվեց որպես Յոթանասունի անդամ և դարձավ ցցի Յոթանասունի քվորումի ավագ անդամ: Իսկ դրանից երկու ամիս անց Ջորջ և Ջուն Ռիքֆորդները կնքվեցին Լոնդոնի (Անգլիա) տաճարում՝ իրենց չորս երեխաների հետ միասին» («Ես կընդունեմ այն հավատքով»):

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD60013873_201_115-teacher_handout-1